«ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՔՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ» ԱՄԲԻՈՆԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԸՍՏ ԱՄԲԻՈՆԻ 2020-2025 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ

Համառոտ տեղեկատվություն ամբիոնի վերաբերյալ

Դասընթացներ

«Հումանիտար առարկաների» ամբիոնը գործում է «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» ֆակուլտետների կազմում անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով:

Ամբիոնն իրականացնում է հետևյալ մասնագիտական առարկաների դասավանդումը՝ «Հայոց պատմություն», «Հայոց լեզու և տերմինաբանություն», «Օտար լեզու» (Անգլերեն), «Փիլիսոփայություն», «Լատիներեն», «Բժշկության պատմություն»:

Այս տարում դասընթացների ծավալը կազմել է 2244 ժ, իսկ դասախոսների ծանրաբեռնվածություն՝ 1943, որից շեղում՝ -198ժ՝ կապված տոն օրերի և խորհրդատվությունների ժամերի հետ:

Դասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

Ամբիոնն ապահովված է համապատասխան մասնագետներով և 2021-22 ուստարում ունեցել է թվով 9 աշխատակից, որից՝ բանասիրական գիտությունների թեկնածու-2, պատմական գիտությունների թեկնածու-1, դասախոս-5, ուսումնաօժանդակ-1:

Պրոֆեսորադասախոսական կազմի միջին տարիքը՝ **47** տարեկան:

«Հայոց պատմություն» առարկան դասավանդող պ.գ.թ. դասախոս Վ.Վասիլյանը 2022-2023 ուստարին չի շարունակելու դասավանդել՝ կապված այլ աշխատանքի տեղափոխվելու հետ, ուստի «Հումանիտար առարկաների» ամբիոնը կարիք ունի վերոնշյալ դասընթացը դասավանդող դասախոսի, որի կապակցությամբ հայտարարվել է մրցույթ:

Պրոֆեսորադասախոսական կազմի, բացառությամբ «Հայոց պատմություն» առարկայից, և ուսումնաօժանադակ կազմի համալրման կարիք «Հումանիտար առարկաների» ամբիոնը չունի:

Ամբիոնի ուսումնագիտական ռեսուրսները

Քանի որ Ամբիոնի առարկաները դասավանդվում են ԱԲՀ-ի գլխավոր մասնաշենքի լսարաններում, ապա Ամբիոնում ուսումնագիտական ռեսուրսների կարիք չկա: ԱԲՀ-ի գլխավոր մասնաշենքի լսարանները գերհագեցած են «Հումանիտար առարկաների» ամբիոնի դասընթացները գերազանց իրականացնելու համար՝ ինչպես տեխնիկապես, այնպես էլ գրականության առումով:

Հետազոտությունների հիմնական ուղղությունները և ձեռքբերումները

1. Ամբիոնի վարիչ, բ.գ.թ.Տաթևիկ Կարապետյանի մասնակցությունը միջազգային գիտական կոնֆերանսներին՝ *National Research University "Exchange at the first international scientific HSE languages education development conference" 3-4 դեկտեմբեր 2021, IX Convegno Nazionale della ISLL Italian Society for Law and Literature, Campobasso, 30 giugno e 1 luglio 2022 Universita degli Studi del Molise, Dipartimento Giuridico, Tatevik Karapetyan (Armenia), Elements of Lex mercatoria in The Merchant of Venice*.
2. Ամբիոնի վարիչ, բ.գ.թ.Տաթևիկ Կարապետյանը 2021 թվականի հեկտեմբերի 10-ից մինչև 2022 թվականի փետրվարի 5-ը մասնակցել *Լոնդոնի Ուեսթմինսթեր Քոլեջի կողմից անկացվող TESOL լեզվի մեթոդիստական դասընթացներին:*

Գերազանցությամբ ավարտելով դասընթացը՝ ստացել է TESOL միջազգային մեթոդիստի որակավորում և վկայական[1]:

3. Ամբիոնի վարիչ, բ.գ.թ.Տ.Կարապետյանը մասնակցել է հետևյալ կոնֆերանսներին՝
   - *Oxford Professional Development Webinar "Oxford Online National Conference 2021 #2" 10 փետրվար 2021,*
   - *Oxford Professional Development Webinar "Oxford Online National Conference 2021" 09 փետրվարի 2021,*
   - Սեմինարներ՝ *Cambridge Assessment English "Big dreams for young learners Pre A1 Starters, A1 Movers, A2 Flyers", 06 հոկտեմբերի 2021, Cambridge Assessment English "Teaching Grammar at B1 and B2 levels", 02 նոյեմբերի 2021, Cambridge Assessment English "Teaching Vocabulary and Functional language at B1 and B2 levels", 03 նոյեմբերի 2021, Cambridge Assessment English "TKT Module 1 - Background to language learning and teaching", 02 նոյեմբերի 2021, Cambridge Assessment English "TKT Module 3 - Background to language learning and teaching", 03 նոյեմբերի 2021, Cambridge Assessment English "Introduction to TKT. TKT Module 2 - Lesson planning and use of resources for language teaching", 21 նոյեմբերի 2021, Cambridge Assessment English "Teaching for B2 First for the first time! Cambridge Teaching and Learning Materials Digital Learning Environment", 04 մարտի 2022, Cambridge Assessment English "Teaching for B2 First for the first time! Developing productive skills. Practical ideas", 02 մարտի 2022, Cambridge Assessment English "Teaching for B2 First for the first time! Developing productive skills. Practical ideas", 03 մարտի 2022, Cambridge "All about Teaching and Assessing Secondary Students", 02 հունիս 2022, Cambridge "Everything you wanted to know about TKT Module 1", 21 հունիս 2022, Cambridge "Everything you wanted to know about TKT Module 1", 21 հունիս 2022. Cambridge "Everything you wanted to know about TKT Module 3", 22 հունիս 2022, Cambridge Assessment English "Everything you wanted to know about TKT Module 3", 23 հունիս 2022.*
   - *Assessment English "Moving up to B1 Preliminary for Schools: the next level", 14 սեպտեմբեր 2022, Cambridge Assessment English "Building speaking and writing skills through project work with young learners", 13 հոկտեմբերի 2021, Cambridge Assessment English "Finding and using texts to use with 1-2-1 learners. Working with teenagers. Developing productive skills and preparing for CEQs for schools", 22 նոյեմբերի 2021, Cambridge Assessment English "Exam preparation and real-world English for A2 Key for Schools and B1 Preliminary for Schools", 07 դեկտեմբեր 2021, Cambridge Assessment English "Developing Speaking skills for B1 Preliminary for Schools and B2 First for Schools: A focus on interactive communication", 13 հունվարի 2022, Cambridge Assessment English*

[1] Բոլոր վկայականները տրամադրված են ՄՈԿ բաժնին:

“Developing Speaking skills for B1 Preliminary for Schools and B2 First for Schools: A focus on grammar and vocabulary”, 24 մարտ 2022, Cambridge Assessment English “Ask our panel of experts your questions about motivating and preparing your teenage learners for the B1 Preliminary for Schools and B2 First for Schools exams”, 10 փետրվարի 2022, Cambridge Assessment English "Developing and assessing speaking skills for young learners”, 07 ապրիլի 2022, Cambridge “Developing and assessing writing skills for A2 Key for Schools and B1 Preliminary for Schools”, 09 հունիսի 2022, Cambridge “Cambridge Day 2022: All about Teaching and Assessing Primary Students”, with Claire Barnes and Laura Moulton, 01 հունիսի 2022, Իտալիայի Տոր Վերգատա համալսարանի կողմից կազմակերպված “SAPIENS Network Advanced Training Course 3 (ATC3)”, 06-08 ապրիլ 2022 (Հիմք՝ մասնակցության վկայականները):

4. Ամբիոնի դասախոս, պ.գ.թ. Վ.Վասիլյանը մասնակցել է Business English Level1 course դասընթացին՝ կազմակերպված Հայաստանում Ամերիկյան Համալսարանի կողմից, որի համար 16.03.2022 թվականին ստացել է վկայական:
5. Ամբիոնի դասախոսներ Անահիտ Կարապետյանը, Տաթևիկ Խաչատրյանը, Ամալյա Գրիգորյանը և Դիանա Աղաբալյանը մասնակցել են Բաբելոն կենտրոնի կողմից կազմակերպված Անգլերեն լեզվի Բ2 մակարադակի դասընթացին, որի համար ստացել են մասնակցության վկայական:
6. Ամբիոնի դասախոս Տաթևիկ Խաչատրյանը մասնակցել է Լոնդոնի Ուեսթմինսթեր Քոլեջի կողմից անցկացվող Անգլերեն լեզվի Բ2 մակարադակի դասընթացին, որի համար ստացել է միջազգային վկայական:

1. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Այս ուղղությամբ ամբիոնի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Գործողություն 1.1 Միջոցներ ձեռնարկել դասախոսական կազմի որակավորման բարձրացման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից իրականացվել է մասնագիտական քննարկում լեզվի դասավանդման արդի հիմնախնդիրների վերբերյալ */Հիմք՝ ամբիոնի նիստի թիվ 10 արձագարություն/*:

Ինչպես նաև Համալսարանի կողմից կազմակերպվել է Անգլերեն լեզվի բարելավման դասընթացներ, որին մասնակցել են ամբիոնի աշխատակիցներ Տաթևիկ Խաչատրյանը, Անահիտ Կարապետյանը, Դիանա Աղաբալյանը և Ամալյա Գրիգորյանը: Իսկ ամբիոնի աշխատակից Տաթևիկ Խաչատրյանը մասնակցել է Ուեսթմինթեր քոլեջ Լոնդոնի կողմից կազմակերպվող Անգլերեն լեզվի Բ2 մակարդակի դասընթացին և գերազանցությամբ ավարտել այն /Հիմք՝ վերապատրաստմանը մասնակցած դասախոսների գրանցաթերթիկ/:

Գործողություն 1.2. Ամբիոնի առարկայական դասընթացների թվայնացում

2021-2022 ուստարվա ընթացքում վերանայվել են առարկայական ծրագրերը և նկարագրերը, ինչպես նաև թարգմանվել և թվայնացվել են վերոնշյալ դասընթացների նյութերը՝ դասագրքեր, դասախոսություններ, տեսաներկայացումներ /Հիմք՝ ԱԲՀ-ի էլ.

գրադարանում, «Հումանիտար առարկաների» ամբիոնի էլեկտրոնային և թղթային տարբերակով առկա առարկայական ծրագրերը և նկարագրերը/:

Գործողություն 1.3. Առարկայական դասընթացների վերաբերյալ տեսանյութերի բազայի ստեղծում:

Տե՛ս 1.2 կետը /Հիմք՝ ԱԲՀ-ի էլ. գրադարանում, «Հումանիտար առարկաների» ամբիոնի էլեկտրոնային և թղթային տարբերակով առկա առարկայական ծրագրերը և նկարագրերը/:

Գործողություն 1.4. Դասալսումների և դրանց քննարկումների բարելավում

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են դասալսումներ 13 փոխադարձ ամբիոնում դասավանդվող բոլոր դասընթացներից և բոլոր դասախոսների մոտ: Դասալսումների մի մասը իրականացվել է դասախոսի անմիջական մասնակցությամբ հեռավար դասընթացին, իսկ մի մասը՝ դասաժամի ձայնագրության հիման վրա: Կիսամյակային դասալսումներից հետո իրականացվել են քննարկումներ ամբիոնի թիվ 5, 7, 8, 9, 10 արձանագրություններում, որի ընթացքում պրոֆեսորադասախոսական անձնակազմին առաջարկվել է վերանայել դասավանդման մեթոդները կամ վերացնել այն թերությունները, որոնք եղել են դասալսման արձանագրման ընթացքում (Հիմք՝ «Հումանիտար առարկաների» ամբիոնի նիստերի և դասալսումների արձանագրությունները):

Գործողություն 1.5. Ամբիոնի կադրային ներուժի բարելավում

Սույն գործողության վերաբերյալ ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը անընդհատ իրականացվող վերապատրաստումների, արդյունքում բարելավում է ինչպես մասնագիտական, այնպես էլ մանկավարժական գիտելիքները:

Գործողություն 1.7. Ամբիոնային աշխատանքների պլանավորում և համակարգում

Ամբիոնային աշխատանքների պլանավորումը և համակարգումն իրականացվել է հավետու ժամանակահատվածի ընթացքում անընդհատ՝ ներառելով կարճաժամկետ և միջնաժամկետ պլանավորումները: Իրականացվել է երկուական կիսամյակային միջանկյալ քննությունների պլանավորում և իրականացում ամբիոնում դասավանդվող բոլոր առարկաներից (Հիմք՝ 2021-2022 ուս.տարվա ծրագիր, յուրաքանչյուր առարկայի օրացուցային պլան, դասալսումների, հերթապահության, միջանկյալ ստուգարքների և քննությունների ժամանակացույց):

Գործողություն 1.9. Մասնակցություն ԱԲՀ-ի գիտական խորհրդի նիստերին

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնը մասնակցել է գիտական խորհրդի 14 նիստի, որոնց քննարկումներին ամբիոնը ցուցաբերել է ակտիվ մասնակցություն նիստերի օրակարգերի քննարկման վերաբերյալ:

Գործողություն 1.10. Փոխադարձ դասալսումների պլանավորում և անցկացում

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են պլանավորված թվով 13 փոխադարձ «Հայոց պատմություն», «Հայոց լեզու և տերմինաբանություն», «Օտար լեզու» (Անգլերեն), «Փիլիսոփայություն», «Լատիներեն», «Բժշկության պատմություն» դասալսումներ,

որոնց վերաբերյալ կազմվել են արձանագրություններ (Հիմք՝ «Հումանիտար առարկաների» ամբիոնի նիստերի և դասալսումների արձանագրությունները)։

2. ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս ուղղությամբ ամբիոնի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Գործողություն 2.2. Իրականացնել միջոցառումներ ուսանողների գեղագիտական դաստիարակությունը զարգացնելու նպատակով:

2021-2022 ուս. տարվա ընթացքում իրականացվել են բաց դասեր, մասնավորապես՝ «Հայոց լեզու և տերմինաբանություն» դասընթացներից, որի ընթացքում ուսանողներն իրենց հայերենի իմացությամբ փայլում էին, և «Հայոց պատմություն» դասընթացի տրամաբանական շարունակությունը եղավ այցելություն Հայոց պատմության թանգարան և Եղեռնի հուշարձան (Հիմք՝ «Հումանիտար առարկաների» ամբիոնի թիվ 8, 12 նիստերը և տեսագրությունները)։

Գործողություն 2.3. Խորհրդատվությունների տրամադրման աշխատանքներ

Հաշվետու ժամանակահատվածում կազմվել է ամբիոնի հերթապահության գրաֆիկ, որը հասանելի է եղել ուսանողներին։ Յուրաքանչյուր դասախոս շաբաթական մեկ անգամ ոչ ֆորմալ տարբերակով խորհրդատվություն է տրամադրել ուսանողներին ուսումնական գործընթացի, միջնկյալ քննությունների և այն հարցերի վերաբերյալ, որոնք ծագել են դասերի ընթացքում (Հիմք՝ «Հումանիտար առարկաների» ամբիոնի յուրաքանչյուր առարկայի 2021-2022 ուստարվա Խորհրդատվությունների մատյան)։

3. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Այս ուղղությամբ ամբիոնի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Գործողություն 3.4. Ընդլայնել ամբիոնի դասախոսական կազմի կողմից հրատարակվող գիտական հոդվածների քանակը:

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից իրականացվել են որոշակի գիտահետազոտական աշխատանքներ, մասնավորապես գիտական հոդվածների հրատարակում, բայց դրանց քանակը շատ քիչ է՝ հաշվի առնելով անբարենպաստ ժամանակները (գիտական աշխատանքների ցանկը կցված է)։

4. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Այս ուղղությամբ ամբիոնի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Գործողություն 4.1. Ուսանողների հետ հետադարձ կապի ապահովման բարելավում

Ուսանողների հետադարձ կապը միշտ եղել է ինչպես դասի ընթացքում, այնպես էլ դասից հետո, քանի որ ամբիոնը շատ է կարևորում ուսանողի կարծիքը։ Պարբերաբար ուսանողների հետ ամբիոնի վարիչի կողմից հարցումներ են իրականացվել ամբիոնում դասավանդվող առարկաների վերաբերյալ, որոնց արդյունքները քննարկվել են պրոֆեսորադասախոսական կազմի հետ։ Թերթությունների առկայության դեպքում դրանք քննարկվել են և վերացվել, մասնավորապես՝ ինքնուրույն աշխատանքների քննարկման առանձին ժամանակ տրամադրելու հարցը, որի պատշաճ իրականացման համար դասախոսները առանձին ժամանակ են հատկացրել։

Գործողություն 4.2. Մասնակցություն ներհամալսարանական ՈԱ միջոցառումներին:

Ամբիոնը հաշվետու ժամանակահատվածում մասնակցել է Համալսարանի ՈԱ միջոցառումներին և հատկապես բոլոր վերապատրաստումներին, որոնք իրականացվել են բաժնի կողմից: Ամբիոնը նաև մասնակցել է համալսարանում կայացած անգլերենի վերապատրաստմանը: **Հիմք՝** բոլոր մասնակիցները ստացել են լեզվի իմացության B2 մակարդակի վկայականներ:

«ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ»
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ բ.գ.թ. Տ.Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Պաշտոնական փաստաթուղթը գտնվում է համալսարանում